

HISTORY AND RIGHT TO SETTLE KARABAKH CONFLICT NEGOTIATION PROCESS

Aleksandr Manasyan

*Corresponding Member of the NAS RA,
Doctor of Philosophy, Professor*

SUMMARY

Mediators usually require the parties of conflict not to go deep into history. But in case of Nagorno-Kharabakh conflict they are offering to give up and return to the previous status quo. All documents presented by the OSCE Minsk Group is presupposed that the Republic of Nagorno Karabakh must give back the territories of the Republic of Azerbaijan and to return to the borders of the former Nagorno Karabakh Autonomous Region. Actually offered to return to a non-existent Soviet Union and the political realities of Soviet Azerbaijan. It is impossible also because in 1991 the Baku refused to be the successor to the Soviet Azerbaijan. As for the free self-determination of peoples and territorial integrity principles that underlie the conflict settlement, it is a declaration of intent and not linked to the concrete content of the problem.

Key words: conflict, status quo, historical arguments, legal arguments, the right of peoples to self-determination, territorial integrity.

ԱՐԵՆԴ ԼԵՑՓՂԱՐԹԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ՍՈՂԵԼԸ

Լևոն Շիրինյան,

*Քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

Հայտնի է, որ նորմատիվային ժողովրդավարությունը արդյունք է արևմտյան հոմոգեն (համաձին) մշակույթի և կապված է անհատական ազատությունների, քաղաքական մասնակցության, հայրենասիրության, քաղաքական պլյուրալիզմի (հոգնակականության) և տոլերանտության (հանդուրժողականության) հետ: Ընդամեն, ժողովրդավարության հիմնական սկզբունքը մեծամասնության սկզբունքն է՝ ժողովրդական սուվերենիտետի (ինքնիշխանության)

դոկտրինի էությունը: Այստեղ ժողովուրդը հռչակվում է պետական գերագույն իշխանության աղբյուր: Այն ենթադրում է նաև փոքրամասնության՝ ընդդիմություն (օպոզիցիա) լինելու իրավունքը, իշխանությունների տարանջատությունը, անձի իրավունքների երաշխավորվածությունը և այլն:

Սակայն XX դարի 60-70-ական թվականներին, երբ համաշխարհային քաղաքական զարգացման ընթացքը առաջադրեց պետականաշինության հիմնախնդիրը պատմական «Արևմուտքի» սահմաններից դուրս և ժողովրդավարական իդեալների ճակատագիրը ոչ Արևմուտքի երկրներում (Ա.Մ.Սալմին), հուլանդական ծագումով ամերիկյան քաղաքագետ Արենդ Լեյպհարթը (անգլ. Arend d' Angremond Lijphart) հիմնավորեց այն դրույթը, թե «ժողովրդավարությունը որպես քաղաքական կարգ ավելի կամ պակաս չափով չեզոք է իր սուբստրատի (հիմքի) «արևմտականությանը» կամ «արևելականությանը»: Գոյություն ունի ժողովրդավարության մի տիպ, որը մեծապես (во многом) իմաստագրվում է տվյալ հակադրությունը: Այդ տիպը ընկերակցային (consociational) ժողովրդավարությունն է»¹:

Ա.Լեյպհարթը, ըստ էության վերաիմաստավորեց ժողովրդավարության մասին գոյություն ունեցող պատկերացումը, որ նա կարող է հաստատվել նաև արևմտյան մշակույթից դուրս, և նրա զարգացման շրջագծի մեջ կարող են ընդգրկվել սոցիալապես և մշակութային առումով հետերոգեն (տարասեռ) հասարակություններ: Իսկ կայուն ժողովրդավարական վարչակարգեր հնարավոր են *կրոնական, գաղափարախոսական, լեզվական, տարածաշրջանային, մշակութային, ռասայական կամ էթնիկական* բնույթով սեգմենտների (հատված, խումբ) բաժանված բազմակազմ հասարակություններում:

Ա.Լեյպհարթն ընկերակցային ժողովրդավարությունը սահմանում է *երկու գլխավոր* (մեծ կոալիցիա, սեգմենտների ավտոնոմիա՝ ինքնավարություն) և *երկու օժանդակ* (համամասնականության սկզբունք և վետոյի՝ արգելանքի իրավունք) հատկանիշներով: Հայեցակարգը, ի վերջո, հանգում է հետևյալին. կոնսոցիալ (ընկերակցային) ժողովրդավարությունը *սեգմենտար (հատվածական, խմբային) պլյուրալիզմ է* (իր մեջ ընդգրկում է

¹ Салмин А.М. Полис, 1992, № 1-2.С. 217.

բազմակազմ հասարակության բոլոր հնարավոր բաժանման գծերը) + (պլյուս) *համաձայնության ժողովրդավարությունը*:

Տրամաբանական անհրաժեշտությամբ Ա.Լեյպհարթը հանգեց քաղաքական զարգացման տեսության մշակման հրամայականին, որի շրջանակներում էլ առաջադրեց ժողովրդավարության ձևերի սեփական դասակարգումը՝ հիմքում ունենալով հասարակության կյանքում քաղաքական էլիտաների դերը: Դրանք են, *կենտրոնամետ* (հատկանշվում է քաղաքական հոմոգենությամբ՝ Մեծ Բրիտանիա, ԱՄՆ), *կենտրոնախույս* (հատկանշվում է տարբեր էթնիկական, կրոնական և գաղափարախոսական սեգմենտների կողմից քաղաքական գերիշխանության համար պայքարով՝ եվրոպական խոշոր երկրներ) և *կոնսոցիատիվ* կամ որ նույնն է՝ ընկերակցային (հիմնված է ձևավորված ինստիտուցիոնալ կառուցվածքի շրջանակներում քաղաքական էլիտաների համագործակցության վրա, որոնք ներկայացնում են հասարակության տարբեր՝ հարաբերականորեն ավտոնոմ սեգմենտներ, Եվրոպայի փոքր երկրներ և «երրորդ աշխարհի» պետություններ):

Ա.Լեյպհարթը ցույց տվեց, որ աշխարհում ամենակայուն ժողովրդավարական վարչակարգերը կարելի է դիտել որպես երկու հիմնական (*«Ժողովրդավարություններ. 21 երկրներում կառավարման մաժորիտար և կոնսենսուսային նմուշներ»* (1984թ.) տեսակներ. *վեստմիստերիան* տիպի մաժորիտար մոդել (Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրիա), *համաձայնության ժողովրդավարություն*, կամ զարգացման ընկերակցային մոդել (Ավստրիա, Բելգիա, Նիդերլանդներ, Շվեյցարիա): Ա.Լեյպհարթը գտնում էր, որ կայուն ժողովրդավարական կառավարման հասնել և այն պահպանել, ճիշտ է, դժվար է, սակայն հնարավոր է:

Շետազայում, 1999-ին (*«Դեմոկրատական կառավարման նմուշները և կիրառությունը 36 երկրներում»*) Ա. Լեյպհարթը հետաքննելով կոնսոցիատիվ ժողովրդավարության հասկացության կիրառությունից և նախընտրեց կոնսենսուսային ժողովրդավարությունը, քանզի, նրա կարծիքով, ժողովրդավարությունն ունիվերսալ է և կարող է իրացվել ինչպես բազմատարր, այնպես էլ միատարր հասարակություններում:

Այդուհանդերձ, առաջադրված վարկածը իր բոլոր վայրիվերումներով արդյունավետ կարող է լինել Հայաստանի Հանրապետության և տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների համար:

ԱՍՓՈՓՈՒՄ

Քաղաքագիտությունը իր զարգացման երկար գործընթացում փնտրում է հասարակական կյանքի կազմակերպման լավագույն միջոցները: Այն կանգ առավ ժողովրդավարության իդեալների ամրապնդման գործընթացի վրա, ներկայացրեց ժողովրդավարության տարբեր մոդելներ, որոնցից մեկը՝ հատուկ նախատեսված է բազմակազմ հասարակության համար՝ կոնսոցիատիվ տարբերակը, որպես արդյունավետ դոկտրին: Հոդվածը նվիրված է ժողովրդավարության տվյալ տեսակի մեկնաբանությանը, զարգացման կոնսոցիատիվ մոդելի կարևորմանը:

Բանալի բառեր. ժողովրդավարություն, բազմակազմ հասարակություն, հավասարակշռություն, սեզմենտներ, վետոյի իրավունք:

АРЕНД ЛЕЙПХАРТ И КОНСОЦИОНАЛЬНАЯ МОДЕЛЬ РАЗВИТИЯ

Левон Ширинян

Доктор политических наук, профессор

РЕЗЮМЕ

Политическая наука в процессе своего длительного развития была в поисках лучших способов организации общественной жизни. Она остановилась на процессе укрепления идеалов демократии, изложила различные модели демократии, одна из которых предназначена специально для многосоставных обществ - консоциальный вариант как продуктивная доктрина. Статья посвящена данной интерпретации демократии, подчеркивая важность консоциальной модели развития.

Ключевые слова: демократия, многосоставное общество, равновесие, сегменты, право на вето.

**AREND LJPHART AND CONSOCIATIONAL
MODEL OF DEVELOPMENT
ABSTRACT**

Levon Shirinyan

Doctor of Political Sciences, Professor

SUMMARY

In the process of long-term development the political science has been searching for the best ways of organizing social life. It was concentrated on the process of strengthening the ideals of democracy, and at the same time it elaborated various models of democracy. One of these models is designed specifically for plural societies - consociational option as an efficient doctrine. The article explores this interpretation of democracy, emphasizing the importance of consociational model of development.

Key words: democracy, plural societies, balance, segments, the right to veto.

БАРТ СЕГОДНЯ

Виктор Согомонян

Доктор политических наук

В 2015-м году третий ноябрьский номер журнала «The Economist»² вышел в свет с обложкой, на которой был изображен французский триколор с характерными пятнами крови посередине флага, на белом. «How to fight back?» - гласил заголовок, кроме которого на обложке не было других текстов, каким-либо образом упоминающих террористические акты, совершенные накануне в Париже. Тем не менее, понятно, что в те дни вряд ли кому-либо из читателей понадобились объяснения по поводу того, о чем и о каких конкретно событиях повествовала главная страница британского журнала.

Эта обложка – наглядный пример актуализации вторичной семиологической системы, существование которой постулировал Роллан Барт в статье «Миф сегодня». «В мифе мы обнаруживаем ту же

²The Economist, Nov. 21st 2015. Available at: <http://www.economist.com/printedition/covers/2015-11-19/ap-e-eu-la-me-na-uk>.